Հավելված N 4
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

ԿԱՐԳ
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

1. Լիազոր մարմինն օրենսգրքով սահմանված դեպքերում վերանայում է ջրօգտագործման թույլտվությունը՝ իր կամ ջրօգտագործողի նախաձեռնությամբ:

2. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությունների վերանայման անհրաժեշտություն առաջանալու դեպքում լիազոր մարմինը երկամսյա ժամկետում գրավոր ծանուցում է ջրօգտագործողներին գործող ջրօգտագործման թույլտվությունը վերանայման ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ջրօգտագործողը ծանուցում ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, դիմում է լիազոր մարմին, պարտադիր ներկայացնելով ջրօգտագործման թույլտվության իր բնօրինակը:

4. Ջրօգտագործողի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվության վերանայումն իրականացվում է ջրօգտագործողի դիմումը ջրօգտագործման թույլտվության բնօրինակի հետ միասին լիազոր մարմին մուտքագրվելու օրվանից:

5. Ջրօգտագործման թույլտվության վերանայման մասին որոշումն ընդունելուց հետո լիազոր մարմինն այդ մասին պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին և հրավիրում իր կողմից վավերացնելու վերանայված ջրօգտագործման թույլտվությունը:

6. Վերանայված ջրօգտագործման թույլտվության ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության պահանջների համաձայն, բացառությամբ օրենսգրքի 33.1-ին հոդվածի 6-րդ ենթակետի՝ լիազոր մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթին ջրօգտագործողի ներգրավմամբ կամ ջրօգտագործողի դիմումի հիման վրա ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման թույլտվության պայմանների բովանդակային (այդ թվում՝ ջրառի

ծավալների մասով) փոփոխություն չառաջացնող տեխնիկական վրիպակների շտկման դեպքում:

7. Օրենսգրքի 33.1-ին հոդվածի 6-րդ ենթակետի դեպքում վերանայված ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետ սահմանվում է գործող ջրօգտագործման թույլտվության նույն ժամկետը:

8. Վերանայված ջրօգտագործման թույլտվությունը կազմվում է 2 օրինակից, որից 1 օրինակը տրվում է ջրօգտագործողին, իսկ մյուս օրինակը պահվում է լիազոր մարմնում:

9. Վերանայված ջրօգտագործման թույլտվությունն ունենում է ծածկագիր՝ որտեղ նշվում է ջրավազանային կառավարման տարածքը, գետավազանը/գետը, ջրառը, ջրահեռացումը, ջրային ռեսուրսը և տրվող ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը՝ համաձայն Ձև N 3-ի:

10. Ջրօգտագործման թույլտվության վերանայումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությամբ սահման-ված կարգով լիազոր մարմինը վերանայված ջրօգտագործման թույլտվությունը գրանցում է պետական ջրային կադաստրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ